

«Անոնց քով կրնաս գտնել թուրք զորքեր,
Ոսկեհուռ զգալի, զգեստցու մետաքս» եւն.:

Իրաւ է որ Լեհացոց համբաւը ցարդ իրենց վաճառականական կարողութեանց է վերադրուած: «Բայց միայն իրրեւ վաճառական չէ որ բարձր զիրք ունէին անոնք. անոնց մէջ բաղմամբիւ էին մտաւորականները, ինչպէս նաեւ արուեստագէտներն ու արհեստաւորները, զոր օրինակ, ոսկերիչները եւ զորդագործները»⁽¹⁴⁾:

Լեհահայ զիւանական թուղթերուն մէջ կը հանդիպինք վաւերական տուեալներու՝ Լեհաստանի մէջ Հայոց զորքի առեւտուրին տիրացած ըլլալնուն: Լվովցի հայ վաճառական մը, Ջախարիաշ Իվաչքիււիչ, 1600ին Կ. Պոլսէն Լվով կը բերէ «30 փաթթոց չամելոտ (մետաքսեղէն)»⁽¹⁵⁾, 9,000 զուկատի արժողութեամբ, 74 օխա չափրան՝⁽¹⁶⁾ 740 զուկատ, 150 զորդ՝ 775 զուկատ»⁽¹⁷⁾ եւն.: Իսկ ուրիշ վաճառական մը, Լվովցի հայ Նիկոլ Բերնատովիչ՝ Անկիւրիայէն կը բերէ «մի քանի տասնեակ կապոց ու բեռ մուխայիր եւ զորդ 14,992 զուկատ արժողութեամբ»⁽¹⁸⁾:

(14) Անդ, էջ 214: Հայ զորդ մը, Յ. Զաւրեան, որ «Հայրենիք» ամսագրի է տարուան 9-12 թիւերուն մէջ ամբողջութեամբ հայերէնի թարգմանելով հրատարակած է W. Lozinskiի Patrycyeti Mieszeczanstwo զործէն, էջ 265-306, կու տայ նաեւ այս տողին բնագիրը:

Armenus hic etiam orinifuz aromate dires
Innumeras merces et Oriente vehit.
Serica cum tylinis argenti et auri,
Quas vel humi stratus Turca Tapetas habet,
Radices acori, cynammonum, ginger.

որուն թարգմանութիւնն ալ կը կցէ ստղէս. «Ահաւասիկ նաեւ մագոտ հայը, որ բերում է Արեւելքից թանկագին անուշահոտ իւղեր եւ բաղմամբիւ ապրանքներ, մետաքսեայ կերպաններ՝ հիւսուած արծաթէ եւ ոսկէթելերով, զորքեր, որ թուրքը փութ է գետնին, մօրաշուշանի արմատներ, կինեմոն եւ քրքում» (էջ 150):

(15) Հոս չափելոտ տառադարձուած ըստս Արաք khamlat որ ծագած է khaml մագախաւ – թաւախաւ, որուն ֆրանսացիք camelot, Սպանիացիք camelote, chamelote, Իտալացիք cambellotto, ciambellotto եւ Սառքին Լատիններէն camelotum, camelinum կ'ըսեն: Բայց նախապէս շփոթուած էր camel (ուղտ) բառին հետ, ըստ Webster's Dict. որով հիւսուելու համար ուղտի մագ ալ կը զործածէին: Համեմատել calamancoի հետ: Անգլիկներէն մէջ ծանօթ է chamlet: Իմաստը՝ ուղտի մագէ պատրաստուած հիւսուածեղէն մը, որուն մէջ հետզհետէ այծի նուրբ մագ եւ նոյնիսկ մետաքս զործածուեցաւ, իսկ այժմ բուրդ եւ բամպակ կը զործածեն: Հայոց Լեհաստան ներմուծածը, ըստ իս, այծի մագէ պատրաստուած նուրբ ցփսին է, զլիւսուորարար Անկիւրիոյ այծի մետաքսանման ծագէն, որուն պատճառաւ եւրոպացիք կարծեցին որ հիւսուածեղէնիս մէջ մետաքս ալ ըլլալու է: Հայերուն ձեռքն էր աշխարհի բոլոր մասերուն համար ցփսիի, այծի մագի, եւ նաեւ Անկիւրիոյ համբաւեալ այծի մագի առեւտուրը: Հայերը ցփսիի առեւտուրով կը զբաղէին Քրիստոնէութենէ ստանջ, որուն համար կան որսչ վկայութիւններ:

(16) Պէտք է ճշգիւլ Սափրան:

(17) Տուրազը սպորտապէս Միացեալ Նահանգաց ոսկերգած երկու տուարէն քիչ մը աւելի կը հաշուուէր: Անգլիական ոսկերգած ինը լիլինի եւ չորս բէնս:

(18) Յ. Զաւրեանի թարգ. W. Lozinski-ի Patrycyeti Mieszeczanstwo էջ 265-306էն: Տես «Հայրենիք» ամսագիր, է տարի, թիւ 9, էջ 153: W. Lozinski օգտուած